արձանագրութեան մէջ 1223 թուին(*)։ Գուցէ նա նոյն լինի և քիչ յետոյ յիշուելիք Հայրաձայն արձանագրութեան Պատրոն Բուպալի հետ, եթէ Հայր Օհանեան վանքի արձանագրութեան «Առուինչք»ը եղծումն է կամ նոյն «Առինչք» անուան հետ, որ հաւանական ենք համարում և մի գիւղ է Կոտայքում։

Հայր Խաչաւորի յաջորդն էր, ինչպէս վերև յիշեցինք, Գրիգոր վարդապետ, որ թէև առաջին անգամ արձանագրութիւնների մէջ յիշւում է ՈԾԵ (= 1206) թուին, բայց աւելի վաղ յաջորդած պիտի լինի։ Վերոյիշեալ թուին Հայրաձայն անունով մէկը հող է գնում Առինչքում «յիսմ Պատրոն Բուպալէն», այդի է տնկում և նուիրում Կեչառիսի ուխտին, Գրիգոր վարդապետը և միւս միաբանները բոլոր եկեղեցիներում մի օր պատարագ են նշանակում Թէոդորոսի տօնին (Ցաւել. Ա. 42)։ Երկրորդ անգամ Գրիգոր վարդապետը յիշատակւում է «ի ՈԿԲ» (= 1213) թուին Վաչէ Վաչուտեանի ժամատան հարաւային պատին թողած արձանագրութեան մէջ. Վաչէն մի նոր իշխանութեան հիմնադիրն էր Բասաղի հովտում Զաքարեանների գերիշխանութեան տակ, մէկը իւր ժամանակի շինարար իշխաններից՝ իւր կնոջ Մամախաթունի հետ. նա իւր դաւառից դուրս ևս առատ նուիրաբերութիւններ ունի արած ուրիշ վանքերին, որոնց մէջ և Կեչառիսին։ Վաչէն միաբանում է (այսինքն նուէրներ տալով միաբանում վանքի պայծառութեան, շինութեան) իւր կնոջ Մամախաթունի և Բուրտ ու Վաչուտ որդիների հետ և տալիս իւր գանձագին Շէն Գաւիթ գիւղում այդի և եկեղեցու սպասներ. Տէր Գրիգորիսը (Բջնոյ եպիսկոպոսը, որ միևնոյն ժամանակ այս վանքի վերատեսուչն էր) և Գրիգոր վարդապետը Ծառգարդարի պատարագը յատկացնում են Վաչէին, Ղազարինը Մամախաթունին, իսկ Նոր Կիրակէինը Բրգին, պարտաւորելով յետագայ վանահայրերին «զսէրն առնէն Նոր Կիրակէին անխափան»(**)։

Նոյն Ս. Նշան մատրան արևմտեան պատի ճակատին Գրիգորի որդի Մխիթարիչը իւր «ախբին այդին» Երևանում՝ տալիս է Կեչառիսի ուխտին և ստանում «հրամանաւ տն. Գրիգորիսի և Գրիգոր վարդապետի(նմի տաւ կոտրած) եւ յառաջնորդութի. Համազասպա» հինգ ժամ Մխիթարչին, երեքը «Տիկնացտիկնա Կոկորին մաւրն», չորսը Գրիգորին, երեքը Մամիկին (Ցաւել. Ա. 45, պատկ. 126)(***)։ Այստեղ յիշուած Տէր Գրիգորիս և Գրիգոր վարդապետը յիշուած են նաև Վասակ Խաղբակեանի շինած գողտրիկ կաթողիկէի (պատկ. 28., նաև 121 աջ կողմի և 122 ձախ շէնքը) հարաւային պատի մեծ արձանագրութեան մէջ (Ցաւել. Ա. 2, պատկ. 4). առաջինը Բճնիի եպիսկոպոսն է, իսկ երկրորդը Գրիգոր Մոնոնիկ կոչուածը, մէկը Արևելեան Հայաստանի նշանաւոր վարդապետներից, մանանկից Լօռուայ և Անիի ժողովներին Զաքարիա սպասալարի ժամանակ։ Հաղբատի Գրիգորիս եպիսկոպոսը, որ Զաքարիայի նորաձեւութիւնների գլխաւոր հակառակորդներից մէկն էր, բրածեծ անել տուաւ կաթուղիկոսի նուիրակ Մինաս եպիսկոպոսին, փախչելով նախ Գետկայ վանքը՝ Դոշ Մխիթարի մօտ և ապա Կեչառիս, ուրեմն, Գրիգոր վարդապետ Մոնոնիկի, ուր և ձերբակալուեցաւ Զաքարիայի մարդկանց կողմից(*)։ Այսպիսով տեսնում ենք, որ Կեչառույքը ծաղկեալ վիճակի մէջ և հռչակ ունեցող մի վանք էր, երբ անցաւ Վասակ Խաղբակեանի ձեռքը։

Գրիգոր վարդապետի օրով շինուեցաւ ոչ միայն կաթուղիկէն 1214 թուին(**), այլ և ժամատունը (պատկեր 121, ձախ կողմի շէնքը, տաճարին կցուած)— յատուկ արձանագրութիւն ժամատան շինութեան մասին չունինք, բայց աջ և ձախ դասի աւանդատների գրոների գլխին թուագրուած են մի մի արձանագրութիւն «թվ. ՈԿԴ» (= 1214). առաջնում ասուած է՝ «սբ. Յովանէսս Յովհաննիսա ծայրին է (ծեր)»(***). երկու պատարագ Վարդավառի Հերքաթ եւ Շաբաթ օրերը յատկացնում են նորան. իսկ երկրորդում գրուած է, թէ «Սբ. Յակոբս Մխիթարա է, տարին :Բ: աւր ժամ առնեն նմա, Եղիական . . . և (ի շաբաթն — մի բառ փչացած)» (Ցաւել. Ա. 46 ա և բ.)։ Այս տուեալներով կարող ենք ասել, որ ժամատունը նշանակուած թուականից ուշ չէ շինուած, բայց շատ էլ առաջ չը պէտք է լինի նորա ծագումը, որովհետեւ այդպիսի արձանագրութիւնները կապուած են եկեղեցու օծման կամ նաւակատեաց տօնի հետ, որ շատ յաճախ երևում է մեր վիմագրութեան մէջ. հէնց հետեւեալ գլխի մէջ Գեղարդի նկատմամբ կը տեսնենք նման երևոյթներ։

Ի հաստատութիւն ժամատան ծագման մօտաւոր ժամանակի ունինք և Հայրաձայնի արձանագրութիւնը սոյն Գրիգոր վարդապետի օրով, ՈԾԵ (= 1206) թուականից (Ցաւել. Ա. 42), որ փորագրուած է և կարմիր ներկած նոյն ժամատան հիւսիսային պատին։ Սորա

(*) Օրբէլեան, Ղուկ. հրատ. 353, 357։ Ալիշան, Սիսական 186։ Կոստ. Վիմ. Տար. 67։

(**) «Սէր առնել» նշանակում է եղբայրական, սիրոյ ճաշ տալ, որի համար սովորական էր «ագապէ», 'αγάπη տերմինը։ Այս մասին տես Մառի կարծիքը Х. В. Т. I. b. I. 41-42 և Т. II. b. I. եր. 145. և մեր յօդուածը Արարատ 1912, 997. «Ագապի հաստատութիւնը Հայոց եկեղեցու մէջ»։

(***) Պարոն Կուկոր անունով մէկը թաղուած է Հաւուց Թառի վանքում ՈՂԵ = 1246 թուին, նախապէս նուիրելով իւր տունը, ջաղացը, երկու աղբին հող և ստանում մի մի ժամ հօր, մօր և ամուսնու անունով։ Մի խոյակի արձանագրութեան մէջ ևս յիշւում է Տիկնանցտիկնայի նուիրատուութեան մասին։ Մենք կարծում ենք, որ գրանք նոյն են կեչառիսի արձանագրութեան նոյնանուն անձանց հետ։ Մխիթարիչը հայրն է, Տիկնանցտիկնան Կուկորի մայրը։

(*) Կիրակոս Գանձ. Ղուկ. հրատ. 162, 166։

(**) Տե՛ս Խաղբակեանք կամ Պռոշեանք, Մասն Առաջին, երես 70 և շար.։

(***) Ուշադրութեան արժանի հայ լեզուի բարբառագիտութեան համար. արձանագրութիւնների մէջ ունինք նաև «խայչ», փոխանակ «խաչ». օր. հէնց հետեւեալ գլխի մէջ (Ցաւել. Ա. 114)։